Հավելված 1

«Հավելված 15

ACBA-CREDIT AGRICOLE

Վարկատուի լոգո (սեղմել և բեռնել)

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գործողության սկիզբ: Չի սահմանվում   Ավարտ: Չի սահմանվում

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ**, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

## 1.

| | |
|---|---|
| **Վարկատուի անվանումը** | "ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ" ՓԲԸ |
| **Գտնվելու վայր** | ՀՀ, ք. Երևան, Բայրոնի 1 |
| **Հեռ.** | (+374) 10 318888 |
| **Էլ.փոստ** | credit_info@acba.am |

## 2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| **2.1 Վարկի անվանում** | "Լոմբարդային վարկ" սպառողական վարկ | |
| **2.2 Վարկի գումար** | Սկսած 25,000 | ՀՀ դրամ |
| **2.3 Վարկի ժամկետ** | 1-24 | ամիս |
| **2.4 Տարեկան անվանական % (ՏԱՏ)** | 19,2-24 | |

*Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:*

| | |
|---|---|
| **2.5 Տարեկան փաստացի % (ՏՓՏ)** | 23-30 |

*Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:*

## 3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| ☐ **3.1 Գրավ** | Ոսկյա իրեր |
| ☐ **3.2 Երաշխավորություն** | Առավելագույնը 1 երաշխավոր |

## 4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| **4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն** | առավելագույնը 120 | % |
| **4.3 Կանխավճար/վարկ հարաբերակցություն** | Չի պահանջվում | % |

**4.2 Մարումների հաճախականություն**

| | |
|---|---|
| ○ **Մայր գումար** | Ամսական |
| ○ **Տոկոսագումար** | Ամսական |

*Այլ հաճախականության դեպքում նշել ձևը*: *Տոկոսագումարի եռամսյակային մարումներ, մայր գումարի մարումը կատարվում է վարկի ժամկետի վերջում*

## 5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

| | |
|---|---|
| **5.1 Վարկային հայտի ուսումնասիրության** | Չի պահանջվում |
| **5.2 Վարկի սպասարկման** | 1% վարկի գումարի նկատմամբ, բայց ոչ պակաս, քան 1,000 ՀՀ դրամը, միանվագ |
| **5.3 Գրավի գնահատման** | Չի պահանջվում |
| **5.4 Նոտարական վավերացման** | Չի պահանջվում |
| **5.5 Գրավի ապահովագրության** | Չի պահանջվում |
| **5.6 Այլ միջնորդավճարներ** | Չի պահանջվում |

| | |
|---|---|
| **5.7 Ընդամենը այլ վճարներ** | 1,000-136,000 ՀՀ դրամ |

*Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար*

## *6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ*

***Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):***

***Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:***

## *7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

***ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ***

| | |
|---|---|
| **7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում** | 0.2% յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ չկատարված պարտավորությունների դիմաց |
| **7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում** | 0.2% յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ չկատարված պարտավորությունների դիմաց |
| **7.3 Այլ վճարներ** | Չի պահանջվում |

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող էկարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

## *8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ*

| | |
|---|---|
| ○ Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ | ○ |
| ○ Հաճախորդի հանրային ծառայությունների համարանիշ | ○ |
| ○ Երաշխավորի անձը հաստատող փաստաթուղթ | ○ |
| ○ | ○ |

## *9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ*

| | | |
|---|---|---|
| **Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ** | 1 աշխատանքային | *օր* |
| **Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ** | 1 աշխատանքային | *օր* |
| **Վարկը տրամադրելու ժամկետ** | 1 աշխատանքային | *օր* *(Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո:)* |

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

### ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

**ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

**ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ**
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

**ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

**ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»**
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:



**Ի՞ՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**
Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

**Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝** այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»